ՍՏԵՓԱՆ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊ. ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՊԱՐՍԻՑ ԹԱԳԱԺԱՌԱՆԳԻ ՀԵՏ

1822 թ. Արցախի թաթար Մեհդի-Ղուլի խանը փախավ Պարսկաստան: «Բայց նրա փախուստը ճանապարհ բաց արեց պարսից թագաժառանգ Աբաս-Միրզայի 1826 թ. մի նոր արշավանքին դեպի Արցախ եւ Գանձակ, որի ժամանակ հայերը դարձյալ ցույց տվին իրանց անձնվիրությունը»[1] ռուսներին: Մեհդի-Ղուլի խանի փախուստով Արցախում վերջացավ թաթարների 70 տարի տեւած (1752-1822 թթ.) խանությունը:

Բանն այն է, որ 1813 թ. հոկտեմբերի 12-ի Գյուլիստանի պայմանագրով Հայաստանի այդ թվում նաեւ Արցախի ու հայ ժողովրդի հարցը վերջնական լուծում չստացավ, քանի որ, նախ՝ դեռեւս ռուսական տիրապետությունից դուրս էին մնում Արարատյան կամ Երեւանի նահանգն ու Նախիջեւանի մարզը, ապա՝ Պարսից արքունիքը որոճում էր նոր մի պատերազմ, որով հույս ուներ նորից իր ձեռքը ձգել հարավկովկասյան այն մարզերը, որոնք ստիպված էր եղել զիջելու Ռուսաստանին: Պարսկաստանը գլխավորապես ցանկանում էր եւ ստանալ Արցախը: Դեռեւս 1816թ. Պարսից թագաժառանգ Աբբաս-Միրզան պաշտոնապես դիմել էր Ռուսաց կայսրին, Գյուլիստանի պայմանագրով ռուսաց ձեռքն անցած տարածքներից գոնե Արցախը Պարսկաստանին վերադարձնելու խնդրանքով, սակայն Ալեքսանդր Ի-ը (1801-1825թթ.) դրա կատարումը անհնար էր համարել:

1825թ. նոյեմբերին ռուսաց կայսր Ալեքսանդր Ի-ի մահը որոշ խառնաշփոթ առաջացրեց Ռուսաստանում, որից փորձեցին օգտվել պարսիկները:

1826թ. հուլիսի կեսին Պարսից թագաժառանգ Աբբաս-Միրզան 80.000-անոց զորքով եւ 30 թնդանոթներով անցնում է Երասխը, մտնում Արցախ եւ մոտենում Շուշիին: Սկսվում է ռուս-պարսկական երկրորդ պատերազմը:

Պարսկական բանակի մեջ էին. «...Ղարաբաղի Մեհդի-խանը, Շաքիի Սելիմ-խանը եւ Շիրվանի Մուստաֆա-խանը, որոնք առաջ ռուսաց կառավարությանը հպատակության երդում էին տվել, իսկ հետո դավաճանելով, փախել էին Պարսկաստան, եւ պարսից զորքերի հետ վերադառնալով, աշխատում էին ապստամբեցնել Անդրկովկասի մահմեդականներին ռուսների դեմ»[2]:

Արցախում, Շաքիում, Շամախիում, Շիրվանում, Գանձակի, Բաքվի խանություններում բռնկվում են մահմեդական բնակչության ապստամբություններ: «Ղարաբաղի պահպանության համար ռուսները թողել էին եգերյան զորագունդից 6 ռոտա միայն,-գրում է Ռաֆֆին,- պոլկովնիկ Իոսիֆ Ռեուտի հրամանի ներքո, որոնք գտնվում էին Չանախչի ավանում, որը այդ ժամանակ պատկանում էր իշխան Մադաթովին: Երբ պարսից զորքերը մոտեցան,

1 **Ռաֆֆի**, Երկերի ժողովածու, հ. IX, Երեւան, 1987, էջ 583, (ասյուսեկրեա՝ **Ռաֆֆի**):
2 **Ռաֆֆի**, նշվ. աշխ., էջ 583:

պոլկովնիկ Ռեուտը թողեց Չանախչին եւ, իր զինվորների հետ փախչելով, հազիվ կարողացավ ամրանալ Շուշի բերդում»[3]:

Պարսիկ բռնագրավիչների առաջին խնդիրն էր գրավել Արցախի սիրտը՝ Շուշի բերդաքաղաքը, որի բնակչության ճնշող մեծամասնությունը հայեր էին: Ինչպես արձանագրել է Ռաֆֆին՝ «Հայերին սպասում էր ընդհանուր կոտորած: Սարսափած ժողովուրդը ամեն ինչ թողած ցրիվ էր եկել, թաքնվել էր լեռների եւ անտառների մեջ: Աբբաս-Միրզան, Պարսկաստանի այդ հայրենասեր թագաժառանգը, Ղարաբաղի ռուսաց զորքերով գրավվիլը վերաբերում էր ոչ այնքան ռուս զինվորների հաղթական սվիններին, որքան հայերի գործակցությանը հօգուտ ռուսների (եւ իրավ, ռուսները Ղարաբաղը տիրելու համար ամենեւին արյուն չէին թափել): Այդ էր պատճառը, որ նա կամենում էր պատժել հայերին, որոնք, նրա կարծիքով, դավաճանել էին Պարսկաստանի դարեւոր հպատակության դեմ»[4]:

Շուշիի բնակիչներն առաջին իսկ օրից ռուսական կայազորի հետ միասին խիզախ պաշտպանության անցան:

Պարսկական զորաբանակը զբաղված էր Շուշիի ու Գանձակ-Ելիզավետպոլի նվաճման գործով: Վերջինս ընկավ կարճ ժամանակում: Իսկ Շուշին պաշտպանող (1826 թ. հուլիսի 25 – սեպտեմբերի 10) 1700 հոգիանոց ռուսական կայազորն ու շրջակա 22 հայկական գյուղերից նրան օգնության եկած 1500 հայ աշխարհազորայիները 48 օր հերոսաբար պաշտպանվեցին պարսկական բազմահազարանոց բանակից եւ ցուցաբերեցին աննկուն կամք բերդի պաշտպանության գործում[5]: Այս ընթացքում հայերի ցուցաբերած անձնվիրության մասին Արցախի ռուսական 42-րդ եգերյան գնդի հրամանատար գնդապետ Ռեուտը, Կովկասի կառավարչապետ՝ գեներալ Ալեքսեյ Երմոլովին գրել է. «Բերդը պաշտպանող հայերի վերաբերյալ պարտքս եմ համարում բացատրել, որ նրանց ծառայությունն արժանի է ամենայն ուշադրության, որովհետեւ նրանք անիտիր գործում էին գերազանց քաջությամբ, դիմացան բազմաթիվ գրոհների, եւ մղեցին թշնամուն՝ պատճառելով խոշոր կորուստներ, արհամարհում էին պարենի պակասը եւ բնավ չէին մտածում բերդը հանձնելու մասին, թեեւ վրա էր հասել կատարյալ սովը»[6]:

Իսկ գեներալ Երմոլովը Նիկոլայ I ցարին ուղղված 1826 թ. սեպտեմբերի 17-ի զեկուցագրում հայտնում էր. «Աբբաս-Միրզան հազիվ թե համարձակվի եւս մեկ ճակատամարտ տալ Ղարաբաղում, քանի որ ես սպասում եմ, որ դրա (Արցախի – Ս. Հ-Ջ.) բնակիչները, որ հայեր են, եւ մեզ մշտապես հավատարիմ, ոչ միայն պարենավորման ոչ մի միջոց չեն տա, այլեւ կոչնչացնեն նրա (Աբբաս-Միրզայի – Ս. Հ-Ջ.) ցաքուցրիվ զորքերը»[7]:

Շուշի բերդաքաղաքի պաշտպանությանն ականատես պատմագիր Միրզա Յուսուֆ Ներսեսովը վկայում է. «Քաղաքի հայ բնակիչները ամեն հարցում ռուսների հետ միասնաբար գործելով՝ ճիգ ու ջանք չէին խնայում նրանց նվիրված կերպով ծառայելիս... Այն ապրիճան, որ որոշ ժամանակ անց հայերի վրա բարկացած Աբբաս-Միրզան հրամայում է, որ ով

3 Անդ:

4 Անդ, էջ 568:

5 «Հայ ժողովրդի պատմություն», հ. V, Երեւան, 1974, էջ 139:

6 **Потто**, Первые добровольцы Карабаха в эпоху водворения русского владычества, Тифлись, 1902, с.62.

7 **Г. Эзовь**, Сношения Петра Великого с армянским народом, СПб, 1898, с.CXXIII.

որ հայի գլուխ բերի, 10 աշրաֆի կստանա: Այդ պատճառով հայերից շատերն են սպանվում»[8]:

Աբբաս-Միրզայի բարկությունը մեղմելու եւ հայ ժողովրդին նրա վրեժխնդրությունից ազատելու նպատակով, Արցախի մետրոպոլիտ Սարգիս արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանի գլխավորությամբ, նրան են ներկայանում Ջրաբերդի մելիք Վանի Աթաբեկյանը եւ Գյուլիստանի մելիք Հովսեփ Մելիք-Բեգլարյանը: «Պարսից թագաժառանգը ընդունեց նրանց Խան-քենդի գյուղում (այժմյան Արցախի Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտում – Ս. Հ-Ջ.), որը գտնվում է Շուշի բերդից մի քանի վերստ հեռավորության վրա»[9]:

Արցախի աշխարհիկ եւ հոգեւոր բարձրաստիճան այրերը «...կարողացան ոչ միայն մեղմել թագաժառանգի բարկությունը, այլեւ արժանացան նրա առաձին հարգանքին: Աբբաս-Միրզան շնորհեց նրանց փառավոր «խալաթներ» եւ հանգստացնելով ճանապարհ դրեց, խոստանալով, թե հայոց ժողովրդին ոչինչ վնաս չի հասցնի, եթե հայերը հավատարիմ կմնան Պարսկաստանին եւ կդադարեն ռուսներին օգնելուց: Իհարկե, հայերը չէին կարող չհամակրել ռուսներին...նրանք եղան, որ ամեն հնարներով նպաստեցին ռուսաց հաղթություններին Աբբաս-Միրզայի դեմ եւ Ղարաբաղը բոլորովին մաքրեցին պարսից զորքերից: Այնուամենայնիվ, Սարգիս միտրոպոլիտի եւ նրա ընկեր երկու մելիքների տեսությունը Աբբաս-Միրզայի հետ բավական թանկ նստեց նրանց համար»[10]:

Պարսկական զորքերի հանկարծակի հարձակման առաջին հաջողությունները կարճատեւ եղան: 1826 թ. սեպտեմբերից հայ աշխարհազորայիններն ու ռուսները ռազմաճակատի բոլոր կետերում սկսեցին ջարդ տալ պարսիկ զորքերին: Այդ հաջողություններից առաջինը Շամքորի ճակատամարտն էր, որտեղ ռուս զինվորներն ու նրանց ամեն ինչով օգնող հայ աշխարհազորայինները հայազգի գեներալ Մադաթովի գլխավորությամբ ջախջախեցին պարսկական 10000-անոց բանակը եւ վերանվաճեցին Գանձակ-Ելիզավետպոլը:

Հաջողությունն էր ուղեկցում նաեւ ռազմաճակատի մյուս կետերում մարտնչող ռուսներին ու հայ աշխարհազորայիններին: Նրանք իրար ետեւից գրավում էին պարսիկներին անցած բնակավայրերը, ազատագրում բնակչությանը: Պարսկական զորքերը փախուստի են դիմում, հեռանալով նաեւ Շուշից, որը 48 օր հերոսաբար պաշտպանվեց եւ չհանձնվեց պարսիկներին:

Եւ, ահա, երբ Աբբաս-Միրզայի բանակը շպրտվում է Արաքսից այն կողմ, Կովկասի կառավարչապետ՝ գեներալ Երմոլովի հրամանով գեներալ Մադաթովը ձերբակալում է Արցախի մետրոպոլիտ Սարգիս արքեպ. Հասան-Ջալալյանին, մելիք Վանուն եւ մելիք Հովսեփին՝ռուսաց կայսրության նկատմամբ անհավատարմության մեղադրանքով: Մելիքներն ուղարկվում են Բաքու, իսկ Սարգիս մետրոպոլիտը՝ Թիֆլիս, Ներսես Աշտարակեցու մոտ, որպեսզի վերջինս քննությամբ պարզի իսկությունը[11]:

Այդ առթիվ Բագրատ Ուլուբաբյանը գրել է. «Դավաճանի խարանով Թիֆլիս Ներսես

8 **Միրզա Յուսուֆ Ներսեսով**, Ճշմարտացի պատմություն, թարգմանությունը բնագրից, ներածությունը եւ ծանոթագրությունները Քրիստինե Կոստիկյանի, Երեւան, 2000, էջ 123-124:

9 **Բաֆֆի**, էջ 568:

10 **Բաֆֆի**, էջ 568-569:

11 **Բաֆֆի**, էջ 569:

Աշտարակեցու՝ Գանձասարի կաթողիկոսությունը վերացնողի դատաստանին էր ուղարկվում Սարգիս մետրոպոլիտը՝ Հասան-Ջալալյան փառավոր տոհմի ներկայացուցիչը, ռուսական կողմնորոշման անհունջ դարբին Եսայի կաթողիկոսի գայիսոնի արժանավոր ժառանգորդը»[12]:

Ալեքսեյ Երմոլովի՝ 1826 թ. դեկտեմբերի 2-ին Ներսես Աշտարակեցուն հասցեագրած նամակում կարդում ենք. «Ղարաբաղի ապստամբութեան ժամանակ, երբ տէրութեան յոյսը մնացել էր միմիայն հայոց վրայ, որպէս իր կողմնակիցների, Սարգիս արքեպիսկոպոսը ոչ միայն նսեմացրեց իրեան գարշելի դաւաճանութեամբ եւ անձնատուր եղաւ Աբբաս-Միրզային, այլեւ յորդորում էր գործել նոյնը հայոց ժողովրդի աւագներին: Նա ներկայանալով Շուշուայ բերդի տակ, գովաբանում էր Ղազարի (Աբբաս-Միրզայի) վեհանձնութիւնը եւ համոզում էր բերդը պաշտպանող հայերին անձնատուր լինել: Թշնամեաց բանակում, խաչը ձեռքին, նա Աստծոյ օրհնութիւնն էր հայցում այն չարագործին, որ առաջնորդում էր աւազակներին եւ երբ սոքա սրի էին մատնում ձեռքներն ընկած թշուառներին: Այսուամենայնիւ, հարգելով նորա (Սարգսի – Ս. Հ-Ջ.) բարձր աստիճանը եւ պաշտպանելով այն նախատինքից, որին մտադիր էին ենթարկել նորան բարեմիտ Հայք, վասն զի երբ նա յորդորում էր հայոց՝ դաւաճանել, սոքա բերդից կոչում էին նորան մօլլա-Սարգիս, - ես հրամայեցի ուղարկել նորան Թիֆլիզ իբրեւ մի մարդու, որ արժանի է խիստ պատժի: Այդ պատիժը կը սպասեմ ես Ձերդ սրբազնութեան խստապահանջութիւնից, վասն զի դուք էք Հայոց ազգի հաւատարմական զգացմանց պահապանը»[13]:

Սարգիս Հասան-Ջալալյանին ձերբակալած եւ Թիֆլիս ուղարկած հայազգի գեներալ Մադաթովի՝ 1826 թ. դեկտեմբերի 12-ին Ներսես Աշտարակեցուն ուղղված նամակում էլ մասնավորապես կարդում ենք. «Կատարելով այստեղի երկրամասի կառավարչապետ պ. հեստեւազորի գեներալ եւ կավալեր Երմոլովի կամքը, պատիվ ունեմ Ձերդ Սրբազնության մոտ ուղարկելու Սարգիս արքեպիսկոպոսին: Նրա արարքների մասին, որոնց համար նա ուղարկվում է Ձեր մոտ, պ. կառավարչապետը իր վրա վերցրեց տեղեկացնել Ձերդ Սրբազնությանը: Իսկ ես իմ պարտքն եմ համարում հաղորդել, որ նրա վարմունքը այնքան անթույլատրելի էր, որ Նորին Գերազանցությունը հրամայեց ինձ ուղարկման ժամանակ նրա նկատմամբ ունենալ խիստ հսկողություն, պահպանելով, սակայն, ողջ անհրաժեշտ հարգանքը նրա բարձր աստիճանի նկատմամբ, ինչը եւ իմ կողմից կատարվել է ճշգրտորեն»[14]:

Սարգիս արքեպիսկոպոսին Թիֆլիս ուղարկելու կապակցությամբ Արցախի ռուսական 42-րդ գնդի հրամանատար գնդապետ Ռեուտը 1826 թ. դեկտեմբերի 26-ի հրամանագրով: Գնդապետ Ռեուտը հրահանգել էր Սարգիս արքեպ. Հասան-Ջալալյանի համար սահմանել պատշաճ եւ անվտանգ ուղեկցող պահակախումբ՝ ապահովելով խիստ հսկողություն սրբազանի հանդեպ, միաժամանակ պահպանելով ողջ անհրաժեշտ հարգանքը նրա բարձր աստիճանի նկատմամբ[15]:

---

12 **Բագրատ Ուլուբաբյան**, Հայոց Արեւելից Կողմանց եկեղեցին եւ մշակույթը, Երեւան, 1998, էջ 252:

13 **Ալէքսանդր Երիցեան**, Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը եւ Կովկասի հայք XIX դարում, հ. Ա, Թիֆլիս, 1894, էջ 253-254:

14 **Արտակ Մաղալյան**, Արցախի մելիքությունները եւ մելիքական տները XVII-XIXդդ., Երեւան, 2007, էջ 143-144, (այսուհետեւ՝ **Ա. Մաղալյան**):

15 Տե՛ս անդ, էջ 293:

Լեոն, քննական ուշադրություն դարձնելով Երմոլովի 1826 թ. դեկտեմբերի 2-ի Ներսես Աշտարակեցուն ուղղված նամակի վրա, նկատել է, որ հերյուրված բամբասանք է Սարգսին Ծուշիի բերդի տակ գտնելու եւ այնտեղ պարսկասիրական ելույթ ունենալու պատմությունը: «Այս, - գրել է նա, - ...մի պարզ հերյուրանք է, եթե նկատի առնենք այն, որ մի պաշարված բերդի պարիսպներին չի կարելի մոտենալ այնքան, որ դեռ կարելի լինի խոսքի բռնվել ներսցիների հետ, իսկ փոխանակ հայհոյանքների՝ հեշտ էր ընդմիշտ լռեցնել այդքան վտանգավոր պրոպագանդիստին՝ գնդակահարելով նրան»[16]:

Մելիք Վանին Ամենայն Հայոց Կաթողիկոս Եփրեմ Զորագեղցուն գրած նամակում այսպես է ներկայացնում Աբբաս-Միրզայի մոտ գնալու շարժառիթները. «... եթէ ոչ գնացից...առ նոսա, ժողովուրդ...առ հասարակ մատնին ամենայն ընչիւք ի կորուստ: Զայս միայն զմտաւ ածեալ՝ թէ ես միայն մատնեցայց, որով ժողովուրդ ապրեցուցից ի գերութենէ անօրինաց...Վերջապէս գնալն...առ պարսիկսն, եղեւ առ օգտի հասարակ ժողովրդոց...հայոց»[17]:

Ինչպես տեսնում ենք, մետրոպոլիտ Սարգիս Հասան-Ջալալյանի ու մելիքների արածն, իհարկե, ճարահատ քայլ էր, որին գնացել էին երեք հայրենասեր, ռուսական կողմնորոշման ջատագով մարդիկ, եւ կատարվածը ոչ թե նրանց մեղքն էր, այլ ռուս հրամանատարության, որը նախօրոք չէր մտածել բերդի պաշտպանության մասին, հակառակը տեղեկանալով Արաքսն անցած պարսից զորքերի առաջխաղացման մասին, Թիֆլիսում նստող Կովկասի կառավարչապետ գեներալ Երմոլովը կարգադրել էր Արցախում գտնվող ռուսական կայազորի հրամանատար գնդապետ Ռեուտին «համախմբվելով Ավետարանոցում՝ թողնել երկիրը (այսինքն՝ Արցախը – Ս. Հ-Ջ.) եւ նահանջել դեպի Թիֆլիս»[18]: Չէր նահանջել այն պարզ պատճառով, որ չէր հասցրել:

Երմոլովի վերոհիշյալ հրամանով արդեն քանիերրորդ անգամ, ապացուցվում է, որ ռուսները նպատակ չունեին օգնելու հայ ժողովրդին, եւ սուտ են ու կեղծ նրանց՝ հայ ժողովրդի հանդեպ ունեցած «դարավոր բարեկամական» վերաբերմունքի դրսեւորումները: Ռուսները մշտապես օգտագործել են անդրկովկասյան ժողովուրդներին՝ այդ թվում եւ հատկապես հայերին իրենց ազգային, պետական շահերի սպասարկման համար:

Արցախի մետրոպոլիտ Սարգիս արքեպ. Հասան-Ջալալյանը ութ ամիս բանտարկված մնում է Թիֆլիսում[19]: Կալանքի շրջանում նրա հոգեկան ծանր ապրումների մասին է վկայում 1827 թ. մայիսի 11-ի Հ. Ալամդարյանի նամակը ուղղված Ներսես Աշտարակեցուն, որտեղ կարդում ենք. Հ. Ալամդարյանը հայտնում է, թե «Սրբազան Սարգիս մետրոպոլիտն մնացեալ կայ աստ ի վարանս, եւ բարւոք է առուրբ միով յառաջ ուղեւորել զնա աստէն»[20]:

Մի քանի օր անց՝ մայիսի 20-ին, Աշտարակեցուն ուղղված նամակում Սիմեոն արքեպիսկոպոս Բզնունյանցը գրում է. «Սարգիս արքեպիսկոպոս մետրապոլիտն հիւանդ է, զիս թախանձանօք խնդրեաց, որ գրեմ սրբութեանդ. կասէ թէ յաջ քո յիս, եւ մի մոռանար զիս: Որքան ի մարմնի եմ՝ սրբութեանդ երախտիքն չեմ մոռանալ, խնդրեմ օր մի յառաջ իմ վանքն ուղարկես զիս»[21]:

---

16 **Լեո**, Երկերի ժողովածու, հ. IV, Երեւան, 1984, էջ 412, (այսուհետեւ՝ **Լեո**, հ. IV):
17 **Ա. Մաղալյան**, էջ 116:
18 **Լեո**, հ. IV, էջ 410:
19 **Բաֆֆի**, էջ 569:
20 **Ա. Մաղալյան**, նշվ. աշխ., էջ 144:
21 Անդ:

Ներսես Աշտարակեցին Աղվանից հինավուրց կաթողիկոսությունը արդեն վերացրել էր, հիմա արդարամտությամբ բազմակողմանի քննության ենթարկեց Սարգիս Հասան-Ջալալյանի գործը, հարցաքննեց նրա բազմաթիվ վկաներին՝ ընդ որում եւ՛ կողմնակիցներին, եւ՛ հակառակորդներին: Եւ երբ այլեւս պարզապես էր եզրակացությունը, պետք է զեկուցեր վերադասին՝ Երմոլովին: Երմոլովը գնացել էր արդեն, եւ նրա պաշտոնը զբաղեցնում էր գեներալ Իվան Պասկեւիչը: Ուստի եւ 1827թ. հունիսի 14-ին Պասկեւիչին գրեց պատասխան-բացատրություն, որի մեջ ասված էր, թե Սարգիս մետրոպոլիտը ոչ թե օգնել է պարսիկներին, այլ կատարել է այն, ինչը պարտավոր էր անել իրեն վստահված հավատացյալների համար, մանավանդ, երբ գեներալ Երմոլովը կարգադրել էր գնդապետ Ռեուտին՝ թողնել Շուշին եւ նահանջել դեպի Թիֆլիս, որովհետեւ իրենք՝ ռուսները «բոլորովին թողնում են այս երկիրը»:

Բացի այս ամենից Սարգիս Հասան-Ջալալյանն իմացել էր նաեւ, որ ռուսներն իսկապես հեռացել են Գանձակ-Ելիզավետպոլից, իսկ պարսիկներն այնտեղից քշել-տարել էին շուրջ 1500 հայ գերիների, որոնց փրկությունն, անշուշտ, իր (Սարգսի – Ս. Հ-Ջ.) խոսքից ու դիրքից էր կախված լինելու:

«Հաւաստիանալով այս մասին եւ ուրիշներից Սարգիս արքեպիսկոպոսը ստիպուած է եղել ներկայանալ Աբբաս-Միրզային եւ ականատես վկայ լինել՝ թէ ինչպէս ջարդում են պարսիկները իւուրեանց ձեռքն ընկած հայերին: Տեսնելով իւր դաւանակցաց այդ թշուառ վիճակը եւ կարեկցելով նոցա, արքեպիսկոպոսը յայտնել է Աբբաս-Միրզային, թէ երբ այս երկիրը եղած է պարսից կամ ռուսաց իշխանութեան ներքոյ, բնակիչները հպատակ են եղած տիրողին. հիմա, եթէ այս երկիրը պէտք է մնա պարսից ձեռքին, ինչ օգուտ կայ բնակչաց ջարդելուց: Այդպիսի հորդորիչ խօսքերով նա համոզել էր Աբբաս-Միրզային այլեւս Հայոց չմատնել անպատեղի տանջանքների եւ ահա այդ միջոցով նա ազատել էր մօտ 60 հայերի անխորշելի մահից: Սարգիս արքեպիսկոպոսի ասածները հաստատւում են արժանահաւատ վկաներով: Իսկ այն լուրերը, որ հասել են գեներալ Երմոլովի ականջին, իբր թէ Սարգիս արքեպիսկոպոսը յորդորած է եղել հայոց ապստամբուիլ եւ կամ իբր թէ բերդի պարսպից կոչած են նորան մօլլա, բոլորովին անճիշդ են, որովհետեւ քննութեամբ այդ ոչ մէկը չհաստատուեցաւ եւ բոլորը բամբասանք դուրս եկաւ: Իսկ հայերը, պահպանելով իւրեանց հաւատարիմ հպատակութիւնը առ ռուսաց գահը, այս ապստամբության բոլոր ժամանակն էլ մնացին անսասան... Կհամարձակիմ հաւատացնել ձեզ, որ ոչ ոք՝ ոչ միայն հոգեւորականներից, այլեւ աշխարհականներից անգամ, որ միայն հայի անուն է կրում, չէր արատաւորիլ իւրեան այդպիսի գարշելի դաւաճանութեամբ:

Այդպէս, ահա, բոլոր հանգամանքներից երեւում է, որ Սարգիս արքեպիսկոպոսը բոլորովին անմեղ է եւ մեղադրանաց ոչինչ առիթ չէ տուած: Վասն որոյ կամ բարեհաճեցէք հաւաստիանալ այս մասին նորանոր քննութեամբ, եւ կամ բաւականանալով վերոբերեալ տեղեկութիւններովս, թոյլ տուէք Սարգիս արքեպիսկոպոսին վերադառնալ իւր բնակութեան տեղը՝ Ղարաբաղ»[22] - գրել է Աշտարակեցին:

Ի պատասխան Աշտարակեցու՝ Կովկասի կառավարչապետին ուղղված վերոհիշյալ նամակի, Իվան Պասկեւիչը 1827 թ. հունիսի 15-ին պատասխան նամակ է ուղարկում Ներ-

22 **Ա. Երիցեան**, էջ 255-256:

սես Աշտարակեցուն՝ հայտնելով Սարգիս արքեպս. Հասան-Ջալալյանին ազատ արձակելու եւ Արցախ վերադառնալու թույլտվություն տալու մասին[23]:

Ներսես Աշտարակեցին իր գրություններից մեկում հանգամանորեն ներկայացնում է մետրոպոլիտ Սարգիս Հասան-Ջալալյանի ձերբակալության հետ կապված Երմոլովի բանսարկությունները եւ բացահայտում մեղադրանքների անհիմն լինելը: Վավերգրում կարդում ենք. «Գրութիւնք վասն Սարգիս արքեպիսկոպոսին սուտ են բոլորովիմբ եւ անհիմն ըստ ամենայնի վասն խաչին եւ աւետարանին, եւ յորդորելոյ զժողովուրդն հայոց յանհաւատարմութիւն իւրոյ Գ. Մեծութեանն, եւ են այնոքիկ պատրանք սատանայից, որով Նորին բարձր գերազանցութիւնն Ալէքսէյ Պետրովիչ Երմոլովն ըստ հասարակ սովորութեան իւրում պատրեալ այնպէս, նախ գրեալ էր առ իս, եւ հրամայեալ էր Կառավարութեան Ղարաբաղու յղել զնա առ իս վասն դատապարտութեան»[24]:

Ա. Խուդաբաշյանի՝ Պետերբուրգից Ներսես Աշտարակեցուն ուղղված 1827թ. մարտի 30-ի նամակում էլ մասնավորապես ասված է. «Հին կուսակալն թէպէտ առ ձեզ եւ առ ազգն մեր բարեհաճութիւն ցուցանէր, սակայն ասէր բազում վատաբանութիւնս գրէր»[25]:

Լեոն գրում է. «...Երմոլովը, որ մի կողմից խոստովանում էր, թէ հայերն են այն միակ վստահելի տարրը, որի վրա յենում էր ռուսաց տիրապետութիւնը, իսկ միւս կողմից Պետերբուրգ թղթեր էր ուղարկում հայատեցութեամբ լիքը, պահանջում էր, որ Սարգիսը ամենախիստ պատիժը կրէ, որպէս զի հայերի հաւատարմական հոչակը վտանգի չենթարկուի: Սակայն Ներսէսը քննութիւն կատարեց, որ եւ ապացուցեց թէ Երմոլովի մեղադրանքները զուտ զրպարտութիւններ են եւ դրանց աղբիւրը գեներալ Մադաթովն է[26]:

Ինչպես տեսնում ենք, թեեւ Ալեքսեյ Երմոլովը տեղում բարեհաճություն էր ցույց տալիս հայերին, սակայն գաղտնի զրպարտող եւ վատաբանող նամակներ էր գրում արքունիք: Ցավոք, նրան այդ «գործում» օգնում էր հայազգի իշխան, գեներալ Մադաթովը[27]:

Ստանալով Կովկասի կառավարչապետի պատասխանը՝ Ներսես Աշտարակեցին 1827թ. հունիսի 17-ին նամակներ է գրում եւ՛ Սարգիս Հասան-Ջալալյանին եւ՛ արցախահայությանը՝ հայտնելով Պասկեւիչի դրական որոշման մասին: Սարգիս Հասան-Ջալալյանին ուղղված նամակում Աշտարակեցին գրել է. «Աշխարհին ըստ իւրում սովորութեան կամեցաւ թէպէտ դատապարտել զձեզ, այլ արդարութիւն աստուածային իրաւանց յաղթող գտեալ աշխարհի՝ արդարացոյց զձեզ վկայել ճշմարտութեանց ձերոց ի ներգործութիւնս սրտի եւ մտաց Նորին բարձր գերազանցութեան նորոգ կուսակալի գեներալ ատիւտանտ Իւան Ֆեդրիչ Պասքեւիչ իրաւասէր զօրապետի եւ գլխաւոր կառավարչի, որպէս ունիք նկատել յօրինակի գրութեանն Նորին մեծանձնութեան:

Այսուհետեւ ընդարձակ են ձեզ ճանապարհք ձեր, եւ ըստ համաձայնութեան հաճոյից իւրոյ սրբազնագոյն օծութեան Վեհափառ Տեառն մերում յորժամ եւ կամք իցեն ձեզ վերադառնալ յաթոռ ձեր՝ կարող էք ճանապարհորդել ազատօրէն, եւ վասն հարկաւորացն ճանա-

23 **Ա. Մաղալյան,** էջ 301:

24 Անդ, էջ 145:

25 Անդ:

26 **Լէօ,** Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Թեմական Հոգեւոր Դպրոցի 1838-1913, Թիֆլիզ, 1914., էջ 113:

27 Գեներալ Վալերիան Մադաթովը՝ նույն ինքը Ռոստոմ Մեհրաբյանը, Վարանդայի մելիք Շահնազարի ջորեպանի որդին է՝ ծնված Վարանդա գավառի Չանախչի գյուղում, (տե՛ս **Բաֆֆի**, էջ 534, 579):

պարհորդութեան ձերոյ յայտնեալ եմ ամենախոնարհաբար սրբազնագոյն Տեառն մերում եւ յանձնեալ հարազատի մերում պատուարժան տէր Յարութիւն աւագ քահանայի Մանուկեանն հոգ կալնուլ՝ եւ տնօրինել զարժանաւորն առ ապահովելոյ զճանապարհորդութիւն ձեր:

Ի վերջո քննությունը լիովին ապացուցում է Արցախի մետրոպոլիտ Սարգիս արքեպ. Հասան-Ջալալյանի անմեղությունը եւ նրան ազատ են արձակում 8 ամիս (1826թ. նոյեմբերից մինչեւ 1827թ. հունիս) ձգված բանտարկությունից հետո: 1827թ. հուլիսի 2-ին Սարգիս Հասան-Ջալալյանը վերադառնում է Արցախ[28] ու, թեեւ վատառողջ, շարունակում է իր հոգեւոր գործունեությունը:

Նրա վերջին նամակներից է «Ղարաբաղու կոմէնդանթ տեառն կապիտան եւ կաւալէր Սիմօն Գալաչեւսկոյն» հասցեագրված գրությունը, որով նա պատասխանում էր ռուսական կայսրության պաշտոնյայի հարցմանը՝ «Ղարաբաղու վանօրէից, եկեղեցեաց եւ յանապատաց դրութենէն կառավարութենէն»:

Մետրոպոլիտը Գալաչեւսկուն խնդրելով վերադասին հայտնել Ղարաբաղի վանքպատկան՝ մասնավորապես Գանձասարի վանքի, Դադի վանքի եւ Հակոբա վանքի սեփականության մասին, գրել է. «Քանզի ամենայն Աղուանից Հայոց եւ Ղարաբաղու գյառաջին եւ գլխաւոր պատրիարքարանն է Գանձասարու վանքս, եւ է այժմ մետրապօլիտարան եւ երկրորդն է Դաթու վանքն արքեպիսկոպոսարան, որ յութն հարիւր ամէ յորս սոքա շինեցեալ ի յազգէն թագաւորացն հայոց, եւ վասն հոգւոց մասին իւրեանց. եւ կառավարութեան տեղւոյն եպիսկոպոսաց, վարդապետաց եւ այլ վանականաց, շնորհեալ են յիշեալ վանօրէիցս գիւղօրայս, ծառայս վարելոյ հանդս եւ հանդասպանս ջրարբի եւ անջուր, որ նոքօք կառավարեն զկեանս իւրեանց վանականքն, եւ ազօթս մատուցանեն առ Աստուած վասն խաղաղութեան աշխարհի մինչեւ ի ժամանակս պարսից Շահերին եւ Ղարաբաու խաներին...եւ մեծամեծաց վկայական գրով հաստատեալ են յիշեալ վանքի սեփական ինչքն: Եւ նմանապէս եւ զմզտուր ծառայքն, որ միայն զվանական գործ են կատարեալ այսինքն ռաչբարք, տաւարապանք, ձիապանք, ոչխարապանք, այգեպանք, ջղացպանք, եւ այլ ապասաւորք վանականք, եւ զսոցին ծառայութեան վանիցն այն է եղեալ որ չեն խափանել զվանական գործն, եւ մարմնաւոր կառավարչաց, ոչինչ ժամանակի խարճ եւ բէկար չեն տուեալ: Տակաւին պատահեալ է, որ ի ժամանակի մեծ շինութեան վանօրէից. խնդրեալ են յերկրիս կառավարչաց, յօգնութիւն առնել վանից, զի ոմանք յօգնութիւն են արարեալ...որպէս ի 1772յամի հանգուցեալ եղբայրն իմ Յոհաննէս պատրիարգն Հայոցն Աղուանից վասն Գանձասարու վանիցս գլխոյն վերստին նորոգման ժամանակին...»: Գրությունն ավարտվում է հետեւյալ կերպ. «Յամի 1828, յամսեանն նոյեմբեր 28, համար 318, ի Սուրբ Աթոռս Գանձասարու... մետրապօլիտ Հայոցն Աղուանից արքեպիսկոպոս Սարգիս Հասան-Ջալալեան»[29]:

Սակայն ութ երկար ու ձիգ ամիսների անիմաստ ու անտեղի բանտարկությունը, դժբախտաբար, մետրոպոլիտ Հասան-Ջալալյանի համար ճակատագրական եղավ՝ անդառնալի հարված հասցնելով նրա կյանքին:

---

28 Տե՛ս անդ, էջ 145:

29 «Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան», գիրք Թ, Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմը 1813-1933թթ., կազմեց Սանդրօ Բէհբուդեանը, Երեւան, 2001, էջ 52-53, (այսուհետեւ՝ ՎՀԵՊ, գիրք Թ):

Արցախի վերջին Կաթողիկոս եւ առաջին մետրոպոլիտ, արքեպ. Սարգիս Հասան-Ջալալյանը մահացել է 1828թ. դեկտեմբերի 19-ին՝ «թողնելով Բաղդասար եպիսկոպոսին հազար եւ մի խառն եւ անլուծանելի գործերի մէջ ընկղմած»[30]:

Սարգիս Հասան-Ջալալյանի եղբորորդի Բաղդասար եպիսկոպոս Հասան-Ջալալյանը, Ամենայն Հայոց Կաթողիկոս Եփրեմ Զորագեղցուն ուղղված 1829թ. փետրվարի 15-ի նամակում գրել է. «Սրբազան մետրապօլիտ Հայրն մեր՝ ի դեկտ. ամսեան ի 19-ին փոխեցաւ առ Աստուած, եւ եթող զմիաբանութիւնս եւ զվանս մեր որբացեալ ի թշուառագոյն վիճակի սգոյ եւ տրտմութեան»[31]:

Տեղեկացնելով Սարգիս մետրոպոլիտի մահվան մասին՝ Բաղդասար եպիսկոպոսը իր հորեղբոր հիշատակին Եփրեմ Կաթողիկոսին նաեւ հինգ ոսկի է ուղարկել[32]:

Մակար Բարխուդարյանցը նրա մահվան հետ է կապում Աղվանից կաթողիկոսության հեռացումը պատմական թատերաբեմից. «...վախճանուած է կաթուղիկոսութիւնն Աղուանից եւ թաղուած վերջին Սարգիս Կաթուղիկոս Ջալալեանցի (ճիշտն ու ամբողջականը Հասան-Ջալալյանի – Ս. Հ-Ջ.) գերեզմանում»[33]:

Սարգիս արքեպ. Հասան-Ջալալյանի գործունեության ժամանակ, եթե մի կողմից փակվեց Արցախի կաթողիկոսության պատմության վերջին էջը, ապա մյուս կողմից բացվեց նույն տարածքն ընդգրկող մետրոպոլիտության պատմության առաջին էջը:

Արցախի վերջին Կաթողիկոս եւ առաջին մետրոպոլիտ Սարգիս արքեպ. Հասան-Ջալալյանի մարմինն ամփոփված է Հասան-Ջալալյանների տոհմական գերեզմանատանը: Գանձասարի վանքի գավթի հարավում գտնվող մեծ եւ տափակ, երեսին հովվական գավազանի պատկերով տապանաքարի վրա արձանագրված է երեք տող.

«ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՍԱՐԳԻՍ ԱՂՈՒԱՆԻՑ
Կ[Ա]Թ[Ո]Ղ[Ի]Կ[Ո]ՍԻՆ, ՈՐ Է ՅԱՋԳԷՆ ՋԱԼԱԼ ԴՕԼԻՆ:
ԹՎ[ԻՆ] :ՌՄՀԷ: (1828)»[34]:

30 **Գրիգոր Տէր-Յովհաննիսեանց**, Բաղդասար մետրապօլիտ Հասան-Ջալալեանցի համառօտ կենսագրութիւն. «Փորձ», 1880, թիւ 5, էջ 156:

31 ՎՀԵՊ, գիրք Թ, էջ 56:

32 Ա. Մաղալյան,էջ 146:

33 **Մակար եպիսկոպոս Բարխուդարեանց**, Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, Երեւան, 1999., էջ 156:

34 «Դիվան հայ վիմագրության», պրակ V, Արցախ, կազմեց Սեդրակ Բարխուդարյան, Երեւան, 1982, էջ 66: